

րին, եւ զերկուսն եւս ըստ իւրաքանչիւր չափու. եւ էր Բարիկ նիզակակից զամենայն աւուրս կենաց նորա: 6 Նոյնպէս յամենայն զաւառս կացուցանէր սպարապետն Յայոց Մանուէլ նահապետս եւ տեարս զաւառաց զաւառաց. եւ առաջնորդէր ամենեցուն խաղաղութեամբ: 7 Եւ ամենայն երկիրն Յայոց ի խաղաղութեան ընդ հովանեան Մանուէլի զամենայն աւուրս կենաց նորա, ամենայն մարդիկ երկիրն Յայոց վայելէին յաւուրս իւրեանց. ուտէին եւ ըմպէին եւ ուրախ լինէին զայն ամս եւթն տերութեանն Մանուէլի, մինչեւ ի բաժանումն երկիրն Յայոց եւ ի քակտումն թագաւորութեանն:

ԳԼՈՒԽ ԽԳ.

1 Յաղագս Մերութանայ Արծրունոյ, որ հանդերձ զաւրաւբ եկն ի վերայ Մանուէլի, եւ սատակեցաւ ի նմանէ:

2 Ապա Մերութանն Արծրունի վաղուց եւս յաւուրսն Արշակայ արքայի լեալ էր ապստամբ ի թագաւորէն Յայոց, ինքնակամ ձեռս տուեալ յարքայն Պարսից, եւ զաւրէսս Մազդեզանցն յանձն առեալ էր, եւ ուրացեալ զհաւատսն քրիստոնէութեան հաւատոց, եւ բազում անգամ լեալ էր առաջնորդ զաւրացն Պարսից, եւ մեծամեծ չարիս անցուցեալ էր ընդ երկիրն Յայոց. եւ տակաւին էր նա առ թագաւորին Պարսից: 3 Ապա գրգռեաց Մերութանս այս զթագաւորն Պարսից, եւ առեալ զաւրս բազումս ի նմանէ, եւ եկն եհաս յերկիրս Յայոց: 4 Եւ էր սորա մեծաւ պարծանաւբ պարծեցեալ առ թագաւորին Պարսից, զի կամ կալեալ կապեալ տարցի զՄանուէլն առ թագաւորն Պարսից, եւ կամ զգլուխն հատեալ՝ զառաջեաւ բերէ թագաւորին Պարսից:

5 Գայր հասաներ ամենայն բազմութեամբն զաւրացն Պարսից յերկիրն Յայոց, եւ թողոյր զբանակ զաւրացն Պարսից ի զաւառին Կորճէից, եւ ինքն իւրով սեփհականան ան գնդան հրոսիւն ժողովելով մեկներ զատաներ յԱրեաց գնդէն: 6 Կամեր յանպատրաստից գալ անկանել ի վերայ Մանուէլի, միայն անձամբ անուն առնուլ, եւ ինքեան միայն կատարել ջանայր, զի ի պարծանսն իւրոյ անձամբ վճարել զգործ պատերազմին: 7 Վասն այսորիկ այսպիսի բանս խաւսեր ընդ զաւրավարսն Արեաց գնդին, եւ ասեր՝ եթէ Ես նախ երթայց լրտեսեցից, եւ զձեզ տարեալ արարից ի վերայ, զի այսպէս դիրաւ լիցի ի բուռն արկանել ըմբռնել: 8 Եւ ինքն զիւր գունդն առեալ, խաղայր գայր հասաներ յերկիրն Կոզ զաւառի. եւ ինքն զտեղի առեալ, առներ լրտես¹ ի բանակն Մանուէլի:

9 Եւ զային հասանէին լրտեսքն, եւ դիտէին զՄանուէլ, զի էր բանակ նոցա ի Բագրաւանդ զաւառի ի Բագուան աւանի, որ է մաւտ յաւերակսն Չարեհաւանդ քաղաքի: 10 Եկին դիտեցին դետքն զբանակն Մանուէլի, եւ զերա-

1 Յօր. տես